# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**09 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 8-Ա**

## ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 9-ի հերթական նիստի **օրակարգը՝**

*1.1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/*

*1.2.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. Կ.ՄԿՐՏՉՅԱՆ/*

*1.3.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

*1.4.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՊԱՏ ԳՅՈՒՂԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀՐԱՆՈՒՇ ԼԵՎՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՈՒՇ ԼԵՎՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.5.«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 281-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.6.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.7.ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

1.8.ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9.ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՐԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԺԵՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11.ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԵՐՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԿԱՄ ԱՆՀԱՅՏ ԿԱՄ

ՄԱՀԱՑԱԾ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.13.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ԹԻՎ 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ /ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ / ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ձ.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

1.14.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ «Կ. ՄԱՐՔՍԻ» ՓՈՂՈՑԸ «ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ» ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԳՈԼԵՑՅԱՆ/

1.15.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ /ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԳՈԼԵՑՅԱՆ/

1.16.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ.ՆԱԶԱՐՅԱՆ/

1.17.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.18.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՎԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,27 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.19.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ 0,105 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.20.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՓՈՂՈՑ 21/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.21.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 61 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.22.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.23.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1.24.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ 0,0962 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

1 . 25 . ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎՇԱՏ ԳՅՈՒՂԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/*

*1.26.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. Կ.ՄԿՐՏՉՅԱՆ/*

**Կողմ -30** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ**

**ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ**

**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ**

**ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ**

**ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ**

**ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ**

**ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ**

**ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ**

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ**

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ**

**ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ**

**ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈԿՐԱՏ**

**ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ**

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**09 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 9-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան եկամուտների կատարողականը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան ծախսերի կատարողականը՝ համաձայն հավելված 2-ի:

**Կողմ -30** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ**

**ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ**

**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ**

**ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ**

**ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ**

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈԿՐԱՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Արտաշատ համայնքի
ավագանու 2023 թվականի փետրվարի 9-ի
N 9-Ա որոշման

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

առ 01.01.2023թ.

| Եկամուտների անվանումը | տարեկան պլան | հաշվետու ժամանակաշրջան / 12 ամիս / | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 12ամիս | փաստացի | կատ. % տարեկա զպլանի նկատմամբ | կատ. % տարեկան պլանի նկատմամբ |
| | հազ. դրամ | | | | |
| **Վարչական մաս** | **3564314.2** | **3563314.2** | **3372611,169** | **94.6** | **94.6** |
| Ընդամենը հարկեր և տուրքեր | 1098994.2 | 1098994.2 | 995819.363 | 90.6 | 90.6 |
| *1. Հարկային եակմուտներ այդ թվում՝* | 1019403.4 | 1019403.4 | **918673.006** | 90.1 | 90.1 |
| ա) անշարժ գույքի հարկ/ հողի հարկ,շին,հարկ/ | 375360.9 | 375360.9 | 312093.526 | 83.1 | 83.1 |
| աա) ֆիզիակական անձանցից | 310795.25 | 310795.25 | 271541.148 | 87.4 | 87.4 |
| աբ) իրավաբանական անձանցից | 64565.65 | 64565.65 | 40552.378 | 62.8 | 62,8 |
| բ) գույքահարկ փոխադրամիջոցներից | 644042.5 | 644042.5 | 606579.48 | 94.1 | 94.1 |
| բա) ֆիզիակական անձանցից | 614900.754 | 614900.754 | 586459.285 | 95.4 | 95.4 |
| բբ) իրավաբանական անձանցից | 29141.76 | 29141.76 | 20120.195 | 69.0 | 69.0 |
| *2. Տեղական տուրքեր այդ թվում՝* | 55590.8 | 55590.8 | 48495.747 | 87.2 | 87.2 |
| ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար, որից՝ | 3500.0 | 3500.0 | 8486.7 | – | – |
| աա) Հիմնական շինություն. համար | 3500.0 | 3500.0 | 8486.7 | – | – |
| աբ) Ոչ հիմնական շինությունների համար | | | | | |
| բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինութ, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման,արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար | 100.0 | 100.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինութ, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 200.0 | 200.0 | 70.0 | 35.0 | 35.0 |
| դ) Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի համար գանձվող տեղ.տուրք | 8237.2 | 8237.2 | 8265.0 | 100.3 | 100.3 |
| ե) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի համար գանձվող տեղ.տուրք | 10005.2 | 10005.2 | 9924.284 | 99.2 | 99.2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| գ) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | 300.0 | 300.0 | 870.19 | – | – |
| է) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխ. հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխ. հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 10820.0 | 10820.0 | 9140.0 | 84.4 | 84.4 |
| ը) Համայնքի տարածքում առևտրի, հանր. սննդի,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղ կազմակերպ. օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24.00-ից հետո աշխ. թույլտվ. համար | 1015.0 | 1015.0 | 695.0 | 68.5 | 68.5 |
| թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվութ համար | 18000.0 | 18000.0 | 7947.573 | 44.1 | 44.1 |
| ժ) Համայնքի տարածքում( բացառությամբ քաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվութ. համար | 350.0 | 350.0 | 120.0 | 34.3 | 34.3 |
| լ) Հանրային սննդի կազմակերպում | 2163.4 | 2163.4 | 1697.00 | 78.4 | 78.4 |
| ի) Թանկարժեք մետաղներից պատրաստվ իրերի մանրածախ առուվաճառքի թույտվ համար | 150.0 | 150.0 | 400.0 | – | – |
| խ) Քաղաքացիական հոգեհանգստի ծիսական ծառ. թույլտվութ. | 750.0 | 750.0 | 875.0 | – | – |
| *3. Պետական տուրքեր այդ թվում՝* | 24000.0 | 24000.0 | 28650.61 | – | – |
| ա) Քաղաքացիական ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ,լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակց վկայականներ տալու համար | 10000.0 | 10000.0 | 12151.2 | – | – |
| բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու,նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու,փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | 14000.0 | 14000.0 | 16499.41 | – | – |
| *4. Պաշտոնական դրամաշնորհներ այդ թվում՝* | 1938873.7 | 1938873.7 | 1938873.7 | 100 | 100 |
| ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 1932990.8 | 1932990.8 | 1932990.8 | 100 | 100 |
| բ)Ընթացիկ դրամաշնորհ | | | | | |
| գ)Ընթացիկ դրամաշնորհ/covid19/ | | | | | |
| գ) սուբվենցիա | 5882.9 | 5882.9 | 5882.9 | 100 | 100 |
| դ) օտարերկրյա պետություններից տրվող տրանսֆերներ | | | | | |
| ե)պետ. բյուջեից տրամադրվող այլ դոտացիա | | | | | |
| *5. Այլ եկամուտներ այդ թվում՝* | 292525.27 | 292525.27 | 250617.396 | 85.7 | 85.7 |
| 5.1 Գույքի վարձակալությունից եկամուտներ այդ թվում՝ | 80000.0 | 80000.0 | 53811.827 | 67.2 | 67.2 |
| ա) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 43377.8 | 43377.8 | 35288.172 | 81.3 | 81.3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բ) Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապ. իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | |
| գ) Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 36622.2 | 36622.2 | 18523.655 | 50.6 | 50.6 |
| դ) Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | |
| 5.2 Վարչական գանձումներ այդ թվում՝ | 62300.0 | 62300.0 | 81916.13 | _ | _ |
| ա) Տեղական վճարներ | 12300.0 | 12300.0 | 17246.997 | _ | _ |
| աա) Աճուրդ-վաճառք կազմակերպելու համար տեղական վճար | 4000.0 | 4000.0 | 759.348 | 19 | 19 |
| աբ) Հողի գործառնական նշանակությունը փոխելու վճար | 1300.0 | 1300.0 | 12983.448 | _ | _ |
| ագ) Շինար ավարտը փաստագր վճար | 3000.0 | 3000.0 | 1250.8 | 41.7 | 41.7 |
| ադ) Շինարարության տեսքի փոփոխության և վերակառուցման համար վճար | 4000.0 | 4000.0 | 2253.401 | 56.3 | 56.3 |
| բ) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 5000.0 | 5000.0 | 16261.76 | _ | _ |
| գ/բազմաբնակարան շենքերի սպասարկում | 45000.0 | 45000.0 | 46603.0 | 103.5 | 103.5 |
| դ) այլ եկամուտներ, | | | 1804.373 | | |
| 5.3 Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 7000.0 | 7000.0 | 590.0 | 8.4 | 8.4 |
| 5.4 Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ (աղբահանություն) | 143225.27 | 143225.27 | 114299.439 | 79.8 | 79.8 |
| 6. Տեղական վճարներ համայնքի ենթ. նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններից օգտվողներից գանձվող ծնողական վճարներ | 225323.0 | 225323.0 | 181223.31 | 80.4 | 80.4 |
| 7. Անասնաբույժի ծառայությունից օգտվելու դիմաց վճար | 2600.0 | 2600.0 | 80.4 | 3.09 | 3.09 |
| 8. Պետ.կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ, որից՝ | 5997.0 | 5997.0 | 5997.0 | 100 | 100 |
| ա) ՔԿԱԳԲ ծառայության համար | 5997.0 | 5997.0 | 5997.0 | 100 | 100 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ֆոնդային մաս** | **2583898.849** | **2583898.849** | **1999719.526** | | |
| *9. Պաշտոնական դրամաշնորհներ այդ թվում՝* | 265791.981 | 265791.981 | **265791.981** | | |
| ա. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) նախորդ տարվա պարտք | 265791.981 | 265791.981 | 265791.981 | | |
| *10. Գույքի օտարումից մուտքեր, այդ թվում՝* | 1244000.0 | 1244000.0 | **169820.677** | | |
| ա) հողի օտարումի ց մուտքեր | 950000.0 | 950000.0 | 159782.964 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բ) այլ գույքի օտարումից մուտքեր | 294000.0 | 294000.0 | 10037.713 | | |
| 11. Վարչ. բյուջեի պահուստ. ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | x | x | 490000.0 | - | - |
| 12. *Տարեսկզբի ազատ մնացորդ, այդ թվում`* | 1074106.868 | 1074106.868 | **1074106.868** | | |
| ա) Վարչական մաս | 2400000.0 | 2400000.0 | 2400000.0 | | |
| բ) Ֆոնդային մաս | 834106.868 | 834106.868 | 834106.868 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 6148213.049 | 6147213.049 | 5372330.695 | 87.4 | 87.4 |

Համայնքի ղեկավար՝ Կ.Մկրտչյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Արտաշատ համայնքի
ավագանու 2023 թվականի փետրվարի 9-ի
N 9-Ա որոշման

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ
առ 01.01.2023թ

| Ծախսերի անվանումը | տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան /տարի/ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տարեկան | Փաստացի | կատարողականը ըստ կիսամյակի պլանի % | կատարողականը ըստ տարեկան պլանի % |
| | հազ. դրամ | | | | |
| 1.ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 2928907.5 | 2928907.5 | 2756733.000 | 94.1 | 94.1 |
| 1.1 Տեղական ինքնակառավարում | 1057341.1 | 1057341.105 | 1009972.432 | 95.5 | 95.5 |
| 1.2 Կրթություն և գիտություն | 1350880.72 | 1350880.70 | 1288664.900 | 95.4 | 95.4 |
| 1.2.1 Նախադպրոցական ուսուցում | 825874.6 | 825874.6 | 804861.747 | 97.5 | 97.5 |
| 1.2.2 Արտադպրոցական դաստիարակություն /այդ թվում՝ սպորտ/ | 423080.1 | 423080.1 | 414498.026 | 98.0 | 98.0 |
| 1.2.3 Մշակույթ և գրադարան | 101926.0 | 101926.0 | 80305.127 | 78.8 | 78.8 |
| 1.3 Քաղաքացիական կացության ակտերի բաժին | 7000 | 7000 | 5856.418 | 83.7 | 83.7 |
| 1.4 Շրջակա միջավայրի պաշտպանություն | 292847.048 | 292847.0480 | 252987.818 | 86.4 | 86.4 |
| 1.4.1 Կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն | 12330.852 | 12330.852 | 6912.041 | 56.1 | 56.1 |
| 1.4.2 Աղբահանում | 273516.196 | 2735165.196 | 244075.777 | 8.9 | 89.2 |
| 1.4.3 Ախտ. և միջատազերծ. ծառ. /դեռատիզացիա/ | 2000.0 | 2000 | 2000.0 | 100.0 | 100.0 |
| 1.4.4 Կեղտաջրերի հեռացում | 5000.0 | 5000 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1.5 Բազմաբնակ. շենքերի սպասարկման աշխատանքներ. | 109942.0 | 109942 | 104226.859 | 94.8 | 94.8 |
| 1.6 Բազմաբնակ. շենքերի թեք տանիքների վերանորոգում | 3000 | 3000 | 0 | 0.0 | 0.0 |
| 1.7 Բազմաբնակ. շենքերի բարեկարգ. այլ աշխատանք | 5000 | 5000 | 978 | 19.6 | 19.6 |
| 1.8 Գույքի նկատմամբ իրավունքի գրանցում | 9995.827 | 9995.827 | 7343.28 | 73.5 | 73.5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.9 Դիմումներ և հայցադիմում. | 2000.0 | 2000 | 1003.348 | 50.2 | 50.2 |
| 1.10 Այլ ցանցի շահագործում | 2000.0 | 2000 | 970.8 | 48.5 | 48.5 |
| 1.11 Հասարակական կազմակերպություններին աջակցություն | 4000.0 | 4000 | 2350.0 | 58.8 | 58.8 |
| 1.12 Սոցպաշտպանություն | 58440.0 | 58440 | 53424.40 | 91.4 | 91.4 |
| 1.13 Ոչ էլեկտրական էներգիա | 7500.0 | 7500 | 7000.00 | 93.3 | 93.3 |
| 1.14 Փողոցների պահպանում և շահագործում | 2000.0 | 2000 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1.15 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում | 16800.0 | 16800 | 10793.945 | 64.2 | 64.2 |
| 1.16 Պահուստային ֆոնդ | 160.8 | 160.8 | 0 | 0.0 | 0.0 |
| 2. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 3219303.572 | 3219303.572 | 1935117.189 | 60.1 | 60.1 |
| 2.1 Կառավարման մարմնի պահպանում | 58686.965 | 58686.965 | 8146.697 | 13.9 | 13.9 |
| 2.2 Այլ ցանցի հիմնանորոգում | 23685.677 | 23685.677 | 23204.526 | 98.0 | 98.0 |
| 2.3 Վարչական օբյեկտների հիմնանորոգում | 71240.603 | 71240.603 | 35685.241 | 50.1 | 50.1 |
| 2.4 Ոռոգման ցանցի վերակառուցում | 631982.477 | 631982.477 | 408721.095 | 64.7 | 64.7 |
| 2.5 նավթամթերք և բնական գազ | 68128.1 | 68128.1 | 53798.821 | 79.0 | 79.0 |
| 2.6 Ա/բ ծածկի վերանորոգում | 1595085.221 | 1595085.221 | 907129.870 | 56.9 | 56.9 |
| 2.7 Կրթություն /այլ դասերին չպատկանող/ | 171341.206 | 171341.206 | 107396.786 | 62.7 | 62.7 |
| 2.8 Կանաչ տարածքների հիմնում և պահպանում | 10000.0 | 10000.0 | 4197.0 | 42.0 | 42.0 |
| 2.9 Հանգիստ,մշակույթ,կրոն | 84517.403 | 84517.403 | 66100.132 | 78.2 | 78.2 |
| 2.10 Բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների նորոգում | 363892.32 | 363892.32 | 302294.021 | 83.1 | 83.1 |
| 2.11Կենսաբազմազանություն բնության պաշտանույուն | 13000.0 | 13000.0 | 13000 | 100.0 | 100.0 |
| 2.12 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4443.6 | 4443.6 | 4443.6 | 100.0 | 100.0 |
| 2.13 Աղբահանում և սանիտարական մաքրում | 123300.0 | 123300.0 | 999.4 | 0.8 | 0.8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 6148211.049 | 6148211.049 | 4691850.189 | 76.3 | 76.3 |

Համայնքի ղեկավար Կ.Մկրտչյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@bk.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**09 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 10-Ա**

## ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Արտաշատ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -30** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ**

**ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ**

**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ**

**ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈԿՐԱՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1
Արտաշատ համայնքի ավագանու
2023թ. փետրվարի 9-ի N 10-Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը ներկայացնում է Արտաշատ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում:

2022 թվականի ընթացքում տարեկան աշխատանքային պլանով նախատեսված իրականացվել են հետևյալ աշխատանքներն՝ ըստ բնագավառների:

1. 2022 թվականի ընթացքում տարբեր գերատեսչություններից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից աշխատակազմ է մուտքագրվել 14.645 դիմում և գրություն:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 4.627 որոշում, արձակվել՝ 865 կարգադրություն: Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 740 հրաման:

Գումարվել է ավագանու 14 նիստ և ընդունվել 299 որոշում:

Իրականացվել են վերոնշյալ փաստաթղթերի մուտքագրման և արխիվացման աշխատանքներ:

2. Հրապարակվել է համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու 22 հայտարարություն՝ 140 թափուր պաշտոնի համար: Կայացել է 21 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է համայնքային ծառայողի 107 պաշտոն:

Տեղի է ունեցել 3 մրցույթ ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար, որից երեքն էլ զբաղեցվել են:

3. Ըստ անհրաժեշտության կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ, խորհրդակցություններ, հանրային լսումներ:

4. Յուրաքանչյուր շաբաթ համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն՝ մասնակցել է թվով 433 անձ:

5. ՔԿԱԳ գործակալության Արտաշատ սպասարկման կենտրոնի կողմից 2022 թվականին կատարվել է թվով 5.024 գործարք, համայնքի բյուջե մուտքագրվել է 12.175.000 (տասներկու միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Թվով 1.543 սոցիալապես անապահով քաղաքացիների համայնքի բյուջեից հատկացվել է որպես դրամական օգնություն 33.125.000 (երեսուներեք միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, Երկրապահ կամավորականների միության Արտաշատի տարածքային բաժանմունքին՝ 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Արցախյան ազատամարտի, քառօրյա և 44-օրյա պատերազմների, 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետևանքով զոհված և անհետ կորած զինծառայողների թվով 139 ընտանիքների համյնքի բյուջեից հատկացվել է որպես դրամական օգնություն 6.950.000 (վեց միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ

3. Կատարվել է թվով 944 տնայց՝ համայնքապետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով: Անցկացվել է սոցիալական աջակցության թվով 31 նիստ:

4. Հաշմանդամություն ունեցող առավել կարիքավոր թվով 5 զին. ծառայողների ընտանիքներ ստացել են սննդի փաթեթներ:

5. Սոցիալապես անապահով թվով 47 քաղաքացու բուժօգնություն ստանալու նպատակով տրամադրվել է պետ. պատվերի միջնորդագիր:

6. Արցախից տեղահանված թվով 100 ընտանիքի հատկացվել է սնունդ:

7. Խիստ կարիքավոր թվով 200 ընտանիքի հատկացվել է վառելափայտ:

8. Զինվորական հաշմանդամություն ունեցող թվով 93 անձանց «Կարո Կարապետյան» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել է յուրաքանչյուրին 100.000 (հարյուր հազար)՝ ընդհանուր 9.300.000 (ինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ օգնություն:

9. Արտաշատ քաղաքում փաստացի բնակվող արցախցի թվով 5 ընտանիքի «Մանկական զարգացման հիմնադրամ»-ի կողմից հատկացվել է կահույք և կենցաղային տեխնիկա:

10. 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինուժի կողմից սանձազերծված լայնածավալ հարձակման հետևանքով Ջերմուկ քաղաքից տեղափոխված, Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած թվով 34 ընտանիքի բարերարների կողմից հատկացվել է սնունդ և հիգիենայի պարագաներ:

11. Սոցիալապես անապահով շուրջ 1.020 ընտանիքի բաշխվել է 1.829 բաճկոն, շարֆ և գլխարկ:

12. Արտաշատ քաղաքում փաստացի բնակվող արցախցի՝ խիստ կարիքավոր բազմազավակ, միայն կենսաթոշակառուներից բաղկացած, 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող թվով 32 ընտանիք ֆրանսահայ բժիշկների կողմից բուժ. զննում է անցել, տրամադրվել են՝ դեղամիջոցներ, հաշմանդամի թվով 2 սայլակներ և դրամական օգնություն:

13. Համայնքապետարանի կողմից հաշմանդամություն ունեցող թվով 2 անձի տրամադրվել են սայլակներ:

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Համայնքի տարածքում արտաքին գովազդի վահանակներ տեղադրելու համար տնտեսվարողների հետ կնքվել է թվով 135 պայմանագիր:

2. Շրջայցերի միջոցով վերահսկողական աշխատանքներ են տարվել բացօթյա առևտրի բնագավառի գործունեությունը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Տրամադրվել է թվով 42 ծանուցագիր:

3. Կազմվել է վարչական վարույթ հարուցելու թվով 1 արձանագրություն:

4. Տեղական տուրքերի մասով տրվել է թվով 588 թույլտվություն:

5. Զարգացման ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում-քննարկումներ տարբեր գերատեսչությունների, հասարակական և դոնոր կազմակերպությունների հետ:

6. Կազմակերպվել է Ֆրանսիայից ժամանած լրագրողների ընդունելություն, ովքեր ճանաչողական այցով առաջին անգամ էին գտնվում Հայաստանում:

7. Կազմակերպվել է հանդիպում Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ա.Լուոյի ղեկավարած պատվիրակության հետ:

8. Ընդունվել է Քլամար քույր քաղաքից ժամանած երիտասարդ սկաուտների 6 հոգանոց խումբը:

9. Ընդունվել է «Հայ Մեդ» բժշկական միության նախագահ Ժան Միշել Էքերյանի և «Սանտե Արմենի» միության նախագահ Ժերար Հովակիմյանի պատվիրակած աշխատախումբը:

10. Համագործակցության նպատակով քննարկումներ են ընթանում հայ-չինական գործընկերության կենտրոնի հետ:

**ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Իրականացվել են Արտաշատ քաղաքային և 37 գյուղական բնակավայրերի համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներ:

2. Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերում տեղադրվել են թվով 87 նոր դռներ, վերանորոգվել և տեղադրվել են 52 պատուհաններ և 15 դռներ, թվով 7 բազմաբնակարան բնակելի շենքերում կառուցվել են աստիճանավանդակներ և մուտքի 23 ճաղավանդակներ, թվով 15 բազմաբնակարան բնակելի շենքերում իրականացվել են տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ, թվով 32 բազմաբնակարան բնակելի շենքերում վերանորոգվել են ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերը: Թվով 25 բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներ ամբողջությամբ մաքրվել են աղբից:

3. Հետևողական աշխատանք է տարվել համայնքի տարածքում նոր հիմնված, վերականգնված ու վերանորոգված հանգստի գոտիների պահպանման ուղղությամբ:

4. Արտաշատ համայնքի քաղաքային լճի հատակը մաքրվել է տիղմից, տեղադրվել է նոր պոմպ, կատարվել են հարդարման աշխատանքներ:

5. Աշխատանքներ են տարվել համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգման և պահպանման ուղղությամբ:

6. Վերակառուցվել և ընդլայնվել է համայնքի արտաքին լուսավորության ցանցը:

7. Կազմակերպված շաբաթօրյակների շրջանակներում սանմաքրման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Արտաշատ քաղաքում և բոլոր վարչական բնակավայրերում: Մաքրվել, բարեկարգվել և պատշաճ տեսքի են բերվել հանրային օգտագործման տարածքները՝ բակերը, այգիներն ու պուրակները, հասարակական նշանակության կառույցների և ճանապարհների հարակից գոտիները: Գործընթացին ներգրավվել են համայնքապետարանի աշխատակազմը, «Արտաշատ-կոմունալ սպասարկում», «Բարեկարգ Արտաշատ» և մի շարք այլ ՀՈԱԿ-ների աշխատակիցներ: Օգտագործվել է հատուկ տեխնիկա, որով կազմակերպել է աղբի և թափոնների բարձումն ու տեղափոխումը աղբավայր: Իրականացվել է կանաչապատման և ծառատունկի աշխատանքներ:

8. Իրականացվել է Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 2 և թիվ 3 գերեզմանատների ճանապարհների մաքրման և հարդարման աշխատանքներ:

9. Իրականացվել են ճանապարհային երթևեկության գծանշման աշխատանքներ:

10. Արտաշատ քաղաքի թվով 5 փողոց ապահովվել է արտաքին լուսավորությամբ:

11. Երևան-Երասխ մայրուղու ասֆալտապատման աշխատանքների արդյունքում երթևեկելի ճանապարհահատվածից հեռացված մանրահատիկ աղացած ասֆալտի շերտից թվով 56 մեքենա տեղափոխվել է Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի բնակելի փողոցների հատվածներ և կատարվել հարթեցման աշխատանքներ: Ինչպես նաև թվով 482 մեքենա մանրահատիկ աղացած ասֆալտ է տեղափոխվել Արտաշատ համայնքի 36 գյուղական բնակավայրեր: Հարթեցվել են գյուղական բնակավայրերի փողոցները, մուտքերը և գերեզմանատների ճանապարհները:

12. 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված մեկ ընտանիքի տրամադրվել է ժամանակավոր կացարան:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Արտաշատ համայնքի հողօգտագործողներին հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվել է թվով 2288 տեղեկանք գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու համար (որից 188-ը՝ Արտաշատ քաղաքի, իսկ 2.100-ը՝ համայնքի 37 գյուղական բնակավայրերի հողօգտագործողներին):

2. Կնքվել են գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 39 նոր պայմանագրեր:

3. Կենդանիների հաշվառման վերջին տվյալներով համայնքում հաշվառված են 12.800 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, 42.586 գլուխ մանր եղջերավոր կենդանի, 5.324 գլուխ խոզ, 89.615 թռչուն և 3.923 փեթակ:

4. Գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվել են ծրագրեր, մասնավորապես՝ «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով պետության կողմից սուբսիդավորված ազոտական պարարտանյութերի տրամադրման ծրագիրը», որի շրջանակներում Արտաշատ համայնքի հողօգտագործողներին տրամադրվել է շուրջ 13.522 պարկ (676,1 տոննա) ազոտական պարարտանյութ (որից՝ 9.147 պարկ (457,3 տոննա) ամոնիակային և 4375 պարկ (218,8 տոննա) կարբամիդ տեսակի պարարտանյութ):

5. Համայնքի անասնաբույժների միջոցով կազմակերպվել է անասնաբուժական ծառայությունների մատուցման բնականոն ընթացքը, ինչպես նաև լիազոր մարմնին է տրամադրվել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն:

6. Արտաշատ քաղաքային և 37 գյուղական բնակավայրերում իրականացված կանաչապատման միջոցառումների շրջանակներում ձեռք է բերվել և տնկվել տարբեր տեսակի 2.150 ծառ, 12.100 թուփ և ծաղիկ:

7. Արտաշատ քաղաքային և 37 գյուղական բնակավայրերում իրականացվել են դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, խճապատման և բարեկարգման լայնածավալ աշխատանքներ:

8. Արտաշատ համայնքի ընդհանուր օգտագործման կանաչապատ հատվածներում իրականացվել է ծառերի աշնանային խորը էտ:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 604 միավոր ճարտարապետահատակագծային առաջադրանք, 330 միավոր շինարարության թույլտվություն՝ այդ թվում սուբվենցիոն ծրագրերի իրականացման շրջանակներում, 91 միավոր ավարտական ակտ, 14 միավոր քանդման թույլտվություն:

Հետևողական աշխատանքների արդյունքում համայնքի վարչական տարածքում կասեցվել են հողազավթման և ապօրինի հողօգտագործման փորձերը:

2. Քաղաքաշինական նորմերին և օրենսդրության պահանջներին համապատասխան, համայնքի տարածքում իրականացվել է շինարարական աշխատանքների որակի հսկողություն: Իրականացվել են համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման, քարտեզագրման և սահմանազատման աշխատանքներ:

3. Հաշվետու տարում կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, հողերի կառավարման ամենամյա ծրագիրը: Իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառում, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգում, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

4. 2022 թվականին ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Արարատի մարզի Արտաշատ համայնքն ընդգրկվել է թվով 7 սուբվենցիոն ծրագրերում (Հավելված N2)՝

1) «Արտաշատ համայնքի բնակավայրերի փողոցների նորոգման, ասֆալտապատման աշխատանքներ» ծրագրի շինարարական աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2023 թվական:

2) «Արտաշատ համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում էներգախնայող միջոցների կիրառում» ծրագրի աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2023 թվական:

3) «Արտաշատ համայնքի բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներ» ծրագրի շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

4) «Արտաշատ համայնքի հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) վերանորոգման աշխատանքներ» ծրագրի շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

5) «Արտաշատ համայնքի կոմունալ սպասարկման կարիքների համար մեքենասարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում» ծրագրով ձեռք է բերվել թվով 3 միավոր մեքենասարքավորում:

6) «Արտաշատ համայնքի բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում (նորոգում)» ծրագրի շինարարական աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2023 թվական:

7) «Արտաշատ համայնքի նախադպրոցական հաստատությունների (մանկապարտեզներ), կառուցում, վերակառուցում), նորոգում» ծրագիրը տեղափոխվել և ընդգրկվել է 2023 թվականի ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Արտաշատ համայնքի սուբվենցիոն ծրագրում:

5. Ակտիվ աշխատանքներ են տարվել կապալառու կազմակերպությունների, շինարարության հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ:

6. 2022 թվականի ընթացքում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել 2023 թվականի ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Արտաշատ համայնքի սուբվենցիոն 7 ծրագրեր:

7. Նշված 7 ծրագրերի շրջանակներում կազմվել և լիազոր մարմին են ուղարկվել սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Իրականացվել է համայնքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների (ՀՈԱԿ-ներ) սննդամթերքի, գրենական, տնտեսական, հատուկ նպատակային նյութերի և դեղորայքի ձեռքբերման թվով 200 գնման ընթացակարգ:

2. Իրականացվել է սուբվենցիոն ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրման, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության, շինարարական աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման թվով 25 գնման ընթացակարգ:

3. Իրականացվել է Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հողամասի, մուտքը կասեցնող համակարգի, տեսախցիկների, շինանյութի, գրասենյակային գույքի, վառելիքի, գրենական պիտույքների, տնտեսական պարագաների, ծառերի և ծաղիկների, հակակարկտային կայանների, աղբամանների, քարթրիչների լիցքավորման, հենասյուների տեղափոխման, ծառայողական (Դեղձուտ բնակավայր) ավտոմեքենայի վերանորոգման, սգո, դեռատիզացիոն, կինոդիտման, համայնքապետարանի աշխատանքների լուսաբանման, ամանորյա միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման գնման թվով 25 ընթացակարգ:

4. 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով 2022 թվականին ձեռք է բերվել թվով 7 նախագծա-նախահաշվային փաստաթուղթ:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Համայնքային ենթակայության մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատություններում սահմանված կարգով հայտարարվել է թվով 68 մրցույթ՝ մանկավարժական թափուր հաստիքների համալրման նպատակով:

2. Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման դասընթացներ, ինչի արդյունքում հավաստագրեր են ստացել 37 դաստիարակ:

3. Կազմակերպվել է նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների բուժքույրերի վերապատրաստման դասընթացներ:

4. Կատարվել է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման աշխատանքներ, ինչի արդյուքում 13 երեխա ստացել է վկայագիր:

5. Մինչև 23 տարեկանների և մեծահասակների Եվրոպայի առաջնությունում ցուցաբերած նվաճումների համար «Արտաշատ համայնքի Ռ. Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի 2 մարզչի և 2 մարզիկի հատկացվել է միանվագ անհատույց դրամական միջոց ընդամենը՝ 3.750.00 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով:
Լավագույն աշխատանքի համար ամսական լրավճարներ են սաահմանվել 4 մարզչի ընդամենը՝ 58.000 (հիսունութ հազար) ՀՀ դրամի չափով:

6. Աշխարհի, Եվրոպայի, այլ միջազգային առաջնություններում և Հանրապետական առաջնություններում՝ «Արտաշատ համայնքի Ռ. Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» և «Արտաշատ համայնքի Լանջազատ գյուղի Ռոբերտ Հակոբջանյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների սաների ցուցաբերած նվաճումների համար 14 մարզիկի և 7 մարզչի հատկացվել է անհատույց դրամական միջոց ընդամենը՝ 1.020.000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև «Մարտեր առանց կանոնների» մեծահասակների միջազգային մրցաշարին մասնակցած և չեմպիոնական գոտի նվաճած «Լեոնարդ» ակումբի մարզիկին հատկացվել է միանվագ անհատույց դրամական միջոց ընդամենը՝ 1.00.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

7. Աշխարհի առաջնությունում չեմպիոնի տիտղոս նվաճած Վազգեն Թևանյանին 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, նրա մարզիչ Ռաֆիկ Գոլեցյանին՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, իսկ Եվրոպայի առաջնությունում չեմպիոնի տիտղոս նվաճած Լիանա Գյուրջյանին 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով հատկացվել է միանվագ անհատույց դրամական միջոց ընդամենը՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

8. Արտաշատի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 9 սանի երաժշտության և արվեստի բնագավառում ցուցաբերած նվաճումների համար և 8 ուսուցչի հատկացվել է միանվագ անհատույց դրամական միջոց ընդամենը՝ 420.000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով:

9. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունից դուրս կազմակերպված մրցաշարերին մասնակցած մարզիչներին և մարզիկներին տրամադրվել են թվով 8 գործուղման ծախսեր:

10. Տեղական վճարների գծով արտոնություններ են սահմանվել համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, երաժշտական և արվեստի դպրոցներ հաճախող 241 երեխայի, այդ թվում 100% նվազեցման արտոնությունից օգտվել է 38 երեխա, իսկ 50% նվազեցման արտոնությունից՝ 203 երեխա:

11. Անցկացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 55 նիստ, կատարվել տնայցեր, կազմվել արձանագրություններ, նախապատրաստվել և դատարան է ներկայացվել 30 հետազոտության ակտ և եզրակացություն:

12. Հաշվետու ժամանակահատվածում համայնքում կազմակերպվել և անցկացվել են Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի, Հայ եկեղեցական և ավանդական տոների հետ կապված մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- Տեառնընդառաջի և Բուն Բարեկենդանի տոներին նվիրված միջոցառումներ
- Կանանց միջազգային օրվան և Թատրոնի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ
- Ծաղկազարդի տոնին և պարի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ
- Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը (ապրիլի 24-ին, կազմակերպվել է քայլերթ)
- Հաղթանակի և խաղաղության տոնը նշվել է մայիսի 9-ին
- Հայաստանի Հանրապետության տոնը (մայիսի 28-ին կազմակերպվել է միասնության շուրջպար)
- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ են կազմակերպվել և անցկացվել համայնքային ենթակայության հաստատություններում
- Նշվել է Վարդավառի տոնակատարությունը
- Երիտասարդների միջազգային օրվա առթիվ կազմակերպվել են հեծանվավազքի սիրողական մրցույթ և համերգ՝ Արտաշատ քաղաքի զբոսայգում:
- Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցու հետ համատեղ աշխատանքի արդյունքում նշվել է Խաղողօրհնէքի տոնը:
- Գիտելիքի և դպրության օրվան նվիրված տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել և անցկացվել համայնքի դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում:
- Գրադարանավարի օրվա և Ուսուցչի տոնի առթիվ կազմակերպվել են միջոցառումներ
- Դեկտեմբերի 27-ին կազմակերպվել և անցկացվել է Ամանորին նվիրված տոնական մեծ միջոցառում

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ** կողմից իրականացված վարչարարության արդյունքում՝

1. Իրականացվել է վարչական իրավախախտումների ուսումնասիրություն, հարուցվել է թվով 10 վարչական վարույթ, կազմակերպվել լսումներ:

2. Հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունվել են վարչական ակտեր, թվով 1-ը ներկայացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, թվով 4-ն

